

## ՆՐՈՒ ԻՄՐԱՅԵԼԻ ՍԱՂՄՈՍՆԵՐ

### VII

Եւ ահա զրկուածներու աշքը աբտա-  
սուք կար և նպատ մխիթարող շոնէին:  
գիրք. Փ.

Զոհերի ձախերը լսեցիք ի՞նչ արիք  
Դուք, մեծաբարբառ աշխարհի որդիք,  
Երբ մենք մոլորուած, գլխակոր, տրտում  
Նայում էինք մեր տան սև-մութ պատերուն.—

Մեր տանն անհերդիք-այրուած ու սև տան,  
Երբ աղջիկներս իրանց ամօթից՝  
Անկիւններ փախչում խոտ էին ուտում,  
Ինչպէս անասուն, ինչպէս մի անբան...—

Դուք տեսամք ինչպէս ողոկեցին ինձնից  
Խմ գարուն-արուն աղջլ'ան գոհար  
Եւ քաշքաշելով տարան իմ տընից  
Մի կրքոտ, լպիրշ գիշերուան համար...—

Դուք տեսամք մատաղ քսան մէկ տարուան  
Իմ միակ որդուն պարանով կապած  
Աչքի առաջև ծեծելով տարան  
Ուր տարան չգիտեմ—գիտէ մէկ Աստուած...—

Զկայ իմ որդին-կինդանի՛ թաղուած.  
Իսկ իմ հօրական փառաւոր տունը  
Փլուած, բայթայուած—հողին հաւասար.  
Հաւքը բուն ունի—չկմց իմ բունը...—

Երբ չհաւատացին աշխարհի վրայ—  
Ասացին կրակը մեռել է ձեր մէջ,  
Սարկութիւնից—ձեր մէջ սէր չկայ,  
Երբ հաւատացինք՝ մեր սէրը պակսեց,—

Եւ ծով կեանքի մէջ—մարդու զարմն ուժեղ  
Հին-հին դարերի՝ տեղ չունի հիմայ  
Նստի շունչ քաշէ, — հիմայ հացի տեղ  
Այս լի աշխարհում խոտ է ուտում նա...»

Դուք որ չեք տեսել—լսել էք միայն  
Հանգիստ էք—հէքիաթ թւում է այդ ձեզ,  
Ապա մէկ անգամ լսեցէք հրացան  
Եւ արեան գետեր շրջապատեն ձեզ...»

## VIII

Եւ արեի տակ տեսայ, որ գատասանի տեղ  
ամքարշաօթիմ կար և արդարութեան  
տեղ անօրէնութիմ... գիրք ժ.

—Անցորդ, կանգնիր—այդ քմը է թէ՛ լեռ,  
Թէ՛ կարավանէ—շարքերով մեծ բեռ  
Ճանապարհի մօտ, թափուած անխնամ —  
Մօտեցիր, մօտեցիր, տես շէնք է փարթամ...—  
«Սպասիր, բարեկամ, շէնք չէ նիւթեղէն,  
Մարդ է, չի շնչում, մարդ է հողեղէն.  
Անպէտք է դարձել—միս ու պինդ ոսկոր.  
Միսը կը գնայ որթերի որկոր—  
Ոսկորը կը մնայ—շուտով չի փթիլ  
Մինչև նոր կեանքով վերածուի երկիր...  
Նոցա, այդ մարդկանց, որ թափել են վար  
Մորթել են ինչպէս մի խող կամ ոչխար  
Եւ այստեղ դիղել, միսը չի ուտում,  
Որ միսն ուտէին, այլ գաղաններին  
Գիշատող թռչնոց թողել են բաժին...  
Այստեղ ճնշում է՝ ծէսով սրբասան  
Կնքում են մանկան, որ եկաւ աշխար,  
Այստեղ մորթում են, որպէս անասուն  
Եւ չունի վերան գերեզմանաքար...»

Ո՞վ գիտէ հիմայ վնարում է որդուն  
 Հայրը սրտացաւ—վշտալի հայրը  
 Կամ դստեր համար խելառ է մայրը.  
 Ո՞վ գիտէ վաղը այս դէղն յետ տալով,  
 Լացի, կականի տիսուր երգերով՝  
 Կըծեծուի, կ'ողբայ իրան վեսային  
 Մատաղահարսը— իսկ սիրող մի կին  
 Սիրած դիու մօտ կը բանայ նոր շիքիմ...  
 Այդպէս, յայտնի չէ, դու կմս, կլինիս,  
 Կամ թնչ կլինիս, եթէ դու լինիս...  
 Եւ այդ մարդու հետ, մարդու ոչ խոզի.  
 Անասուն ու բոյս տէր են բնութեան  
 Իրաւունք ունին—մարդն իրաւացի  
 Չունի իրաւունք կեանքի, գոյութեան  
 Եւ պաշտպանութեան... կը հասնի մէկ օր—  
 Վիթխարի դէզեր լեռ—դիակների—  
 Դլուխ կը բառնան իբրև լիազօր  
 Եւ ամէն մէկը այդ մարդ—արժատից  
 Ահեղ դատի մէջ՝ Աստըծոյ առաջ  
 Իրաւունքները իր բանաբարուած  
 Պիտի թախանձէ—պահանջէ պատիժ...  
 Ո՛, մարդ, սոսկացիր, այդ ցաման օրից.  
 Այդ բիւր—բիւրաւոր սառն գլուխներից,  
 Որ պիտի բանան իրանց աչքերը—  
 Աչքերը պաղած—խոր փորփորուած,—  
 Իրանց շրթունքները—կտրուած, սղոցած.  
 Իրանց ականչները աքցանով պոկուած,  
 Իրանց գանգն, ուղեղ մուրճով ջախջախուած,  
 Ոտքերն ու ձեռքեր մամլի տակ դրուած—  
 Եւ զարկուած ճնշուած կուրծքերն ու մարմին—  
 Պիտի բանան, պիտի քողոքն միասին—  
 Ո՛, մարդ, սոսկացի՛ր, խեղդուի՛ր ու լաց,  
 Խղճիդ, —վեհ, արդար դատաստանի առաջ...

## IX

Ահա՝ ես ձեր առաջ եմ զնում կեանքի  
 ճանապարհը և մահուան ճանապարհը  
 (Եղեմ)

Եւ կոչ եմ կարդում—կոչս սրտագին,

Քեզ կոչ եմ կարդում հայոց ժողովուրդ.  
 Մահի, սարսափի հագուստ քո հագին  
 Դու զրկուած, զարկուած, դու զիլ ջարդուբուրդ  
 Դու ահը սիրացդ հեռու ես փախչում,  
 Օտար երկիրներ, վայրեր հեռաւոր,  
 Թո բունդ թողած օտար ծոց թագչում—  
 Դու, մեծ հայրերի սերունդ փառաւոր.

Եւ մեմ ես թողնում Ազատն—Մասիս  
 Արագած լեռդ, Սիւնիքն ու Սասոնն,  
 Սուրբ էջմիածին, Մայր—Արաքսն ու Սիս  
 Ա՛խ, մւր ես թողնում, դու մեմ ես թողնում...  
 Եւ օտար ափեր, տարօրէն ափեր  
 Հայրենի հողէդ տարւում ես հողմով,  
 Իմ, մեծ ժողովուրդ, այնտեղ դու անտէր  
 Աշխարհի ծովում կը կլուիս ուժով...

Ո՛, արի, դու եկ, կպիր քո բնիդ,  
 Հարազատ հողիդ սրտին՝ դու կպիր,  
 Տուն բնը քո որդոց, հւժ տուր քո շնիդ,  
 Օջախդ վառէ, օջախիդ, հպուիր...

Եւ կոչ եմ կարդում, և կոչ եմ կարդում,  
 Քեզ կոչ եմ կարդում, ժողովուրդ հայոց,  
 Դու կանգնիք կանգուն, դու եղիք արթուն  
 Եւ սրտիդ սեղմէ քո հին օրօրոց:

**ՑՈՎՀ. ԿՈՍՏԱՆԵԱՆ**